# ԿԱՐԾԻՔ

## ՍԻՐԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ՝ «ԱՆՁԻ ԵՍ-ԿՈՆՑԵՊՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 25-33 ՏԱՐԵԿԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԹ.00.01 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ և ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անձի հետազոտության ոլորտում հրատապ խնդիր է Ես-կոնցեպցիայի հետազոտությունները արդի հետխորհրդային հոգեբանության սահմաններում ինտեգրելը, տեղավորելը: Չնայած այն հանգամանքին, որ համաշխարհային գիտական միտքը գիտական այս ոլորտում համակարգային տեսական և գործնական արդյունքներ է տվել, հետխորհրդային տարածքի հոգեբանական մտքի համար Ես-կոնցեպցիայի հետազոտության վրա ազդած որոշակի պայմաններ հանգեցրել են նրան, որ այն արժանացել է պայմանական-սխեմատիկ դիտարկման՝ անձի ամբողջական տեսության սահմաններից դուրս: Հետազոտողները դիտարկել են դրա մասնավոր կամ ընդհանուր կողմերը՝ անտեսելով գիտական գիտելիքն ինտեգրելու հնարավորություն ընձեռնող հորիզոնական և ուղղահայաց մեթոդոլոգիական սկզբունքների ու մոտեցումների ամբողջականությունը: Անհրաժեշտ է ողջ ընդհանուր հոգեբանության մեջ հատուկ աշխատանք իրականացնել անձի Ես-կոնցեպցիայի ժամանակակից հետազոտությունների հավաքագրման և ընդհանրացման համար: Ես-կոնցեպցիան որպես երևույթ, միջառարկայական ու համագիտական բնույթ է կրում, իսկ Սիրինա Առաքելյանի հետազոտությունը, որում ամբողջացվել և ներկայացվել են Ես-կոնցեպցիայի ու դրա կառուցվածքային բաղադրիչների վերաբերյալ գիտնականների տարաբնույթ տեսակետեր, կարծիքներ, մեծ նշանակություն ունի այդ երևույթի վերաիմաստավորման հարցում:

Վերը նշվածի հետ միաժամանակ հարկ է նշել, որ սոցիալական փոփոխությունների ու ճգնաժամերի դարաշրջանում հասարակական կյանքի դժվարին պայմանները, որ մշտապես ու շարունակաբար հանգեցնում են անվերջանալի անձնային ճգնաժամերի,

նորմատիվ ճգնաժամերի ավելի մանրակրկիտ ուսումնասիրություն են պահանջում, ինչը բնականաբար կօգնի մասնագետներին մշակել մեթոդներ, որոնք հետազոտության և հոգեթերապիայի համար առավել արդյունավետ են և որոնք նաև կնպաստեն անձի ներքին աշխարհի ամբողջականության պահպանմանն ու հետագայում ինքնիրականացմանը: 25-33 տարեկանի շրջանը ոչ միայն նորմատիվ, այլ նաև անձնային ճգնաժամերի շրջան է, քանի որ 28-33 տարեկանում տեղի է ունենում անձի վերակազմավորում, վերաձևավորում: Սա «մտերմության» (ինտիմության), սեփական անձի էկզիստենցյալ փնտրտուքի, որոնումների, «չորրորդ կյանքի» ճգնաժամի տարիքն է, երբ անձի ակնկալիքների և իրականության անհամապատասխանություն է դիտարկվում, և երբ առաջ է գալիս դերային խառնաշփոթ: Վերոհիշյալ հանգամանքների հետ կապված՝ Սիրինա Առաքելյանի հետազոտությունը ձեռք է բերում ինչպես **տեսական**, այնպես էլ **գործնական** ահռելի նշանակություն, ինչն էլ այն շատ **արդիական** է դարձնում ժամանակակից աշխարհի իրականության պայմաններում:

Կարևոր ենք համարում նշել, որ Սիրինա Առաքելյանը տիրապետում է գիտական որակյալ ապարատի, , կարողանում է թե՛ ակադեմիական, գիտական, թե՛ միաժամանակ պարզ ու հստակ լեզվով շարադրել այնպիսի բարդագույն գիտական խնդիր, ինչպիսին Ես-կոնցեպցիայի հիմնախնդիրն է:

Եթե փորձենք ընդհանրացված ներկայացնել աշխատանքի տեսական մասը, առանձին-առանձին չանդրադառնալով ատենախոսության յուրաքանչյուր գլխի, ապա կարող ենք նշել, որ աշխատանքն իրականացվել է բարեխղճորեն, այն իմաստով, որ հեղինակն ընդգրկել է իր հետազոտությանն այս կամ այն կերպ առնչվող գրեթե բոլոր մոտեցումներն ու հայեցակարգերը, կարողացել է դրանք միավորել միասնական կառուցվածքի մեջ և այդ ամենի միջով կարմիր թելով տանել հետազոտության օբյեկտի հիմնական գաղափարը:

Կուզենայինք կարևորելով ընդգծել ատենախոսական աշխատանքի տեսական մասի ևս մեկ կողմի վրա, այն, որ հեղինակը կարևորել է Ես-կոնցեպցիայի կառուցվածքի, դրա կազմում մտնող բաղադրիչների հարցը: Հեղինակը ոչ միայն մանրակրկիտ կերպով ուսումնասիրում է դասական բաղադրիչներից յուրաքանչյուրը, այլ վերլուծում է նաև ժամանակակից աշխարհի փոփոխվող իրականության հետ կապված, դրանց արդյունքում

ձևավորվող բաղադրիչները, օրինակ, Վիրտուալ Ես-ը, որի ձևավորումն ու զարգացումը ուղղակիորեն պայմանավորված են պատմամշակութային համատեքստի առանձնահատկություններով ու կախված են վերջիններից:

Ատենախոսության գործնական հատվածի առումով հարկ ենք համարում նշել, որ Ս. Առաքելյանը այստեղ ևս դրսևորել է հետազոտողի իր կոմպետենտությունը: Նշվածը վերաբերում է ինչպես մեթոդիկաների ընտրությանը, որ հետազոտության օբյեկտի բազմակողմանի ու տարբեր մակարդակներում ուսումնասիրության հնարավորություն են տալիս, այնպես էլ հետազոտության կազմակերպման ու իրականացման հենց բուն տրամաբանությանը: Ընտրված մեթոդիկաները հետազոտվող հիմնախնդրին համապատասխանելու խիստ ստուգված հիմք ունեն: Հատկանշական է նաև, որ հետազոտական աշխատանքները մոտ 14 տարի են ձգվել, ինչը հեղինակին թույլ է տվել տարբեր տեսանկյուններից դիտարկել ու հետազոտել հիմնախնդիրը: Ս. Առաքելյանի աշխատանքի առավելություններից ենք համարում հեղինակային հարցարանի ստեղծումն ու կիրառումը, որ համապատասխան փորձարկում անցնելուց հետո կարող է գիտության մեջ լայն կիրառություն ունենալ: Հարցարանն ունի հստակ մտածված կառուցվածք և կարող է կիրառվել ինչպես հետազոտական, այնպես էլ հոգեթերապևտիկ աշխատանքների ընթացքում:

Այնուամենայնիվ, մեր կարծիքով, սույն աշխատանքում հատուկ ուշադրության է արժանի Ես-կոնցեպցիայի համակարգային հեղինակային մոդելը, որը, առաջադրված լինելով հենց հեղինակի կողմից, նրա եզրակացությունների ու մտահանգումների բազմաֆունկցիոնալ կիրառման հնարավորություն է տալիս: Մոդելը հետաքրքիր է կառուցվածքա-բովանդակային, ֆունկցիոնալ և կիրառական տեսանկյուններից, ինչպես նաև հնարավորություն է տալիս տեսողական, վիզուալ կերպով, կտրվածքով «տեսնել» Ես-կոնցեպցիան: Հատուկ ուշադրության է արժանի այն փաստը, որ Ես-կոնցեպցիայի հեղինակային այս մոդելը ստեղծվել է տրամաբանության սկզբունքների և օրենքների համապատասխան:

Մեկ այլ կարևոր, մեր ուշադրությունը գրաված պահ է տերմինաբանությունը: Սիրինա Առաքելյանը առաջ է քաշում նոր գաղափարներ և դրանք մատնանշող նոր տերմիններ (*«Լոկոմոտիվային Ես», «Ներհայեցողական Ես»*): «Ներհայեցողական Եսի» գաղափարը,

մեր կարծիքով, շատ ակտուալ հասկացություն է, քանի որ անձի զարգացման ժամանակակից տենդենցներն ու ողջ առաջադեմ հոգեբանությունը ավելի ու ավելի են հենվում ներհայեցողության՝ «ինտրոսպեկցիայի» գաղափարի վրա՝ դրա ժամանակակից մեկնաբանությամբ: Թվում է, որ մենք պարույրանման զարգացման (спиралевидное развитие) նոր գալարի վրա ենք գտնվում, երբ համադրվելով գիտակցվածության հետ՝ ներհայեցողությունը՝ ինքնադիտումը, նոր գծեր է ձեռք բերում: Այս համատեքստում վերոնշյալ տերմինը առավել քան տեղին ու համապատասխան է:

Այս ամենի հետ մեկտեղ, չխախտելով ընդդիմախոսի ժանրը և դերը, կցանկանայինք արտահայտել նաև մեր որոշակի դիտողությունները:

- Նախ և առաջ կուզենայինք նշել, որ Ս. Առաքելյանը, որպես մեթոդոլոգիական հիմք թվարկելով բազմաթիվ հեղինակների մոտեցումներ, այնուամենայնիվ չի նշում, թե նշված մոտեցումների կոնկրետ որ հայեցակարգային դրույթների վրա է հիմնվում: Հեղինակը տեսական հատվածում հետազոտվող հիմնախնդրի բազմակողմանի ու մանրակրկիտ վերլուծություն է արել, այդ իսկ պատճառով, մեթոդաբանական հիմնավորումն ըստ էության չպետք է դժվարություններ առաջ բերեր:
- Երկրորդը. տեսական-վերլուծական հատվածում, որտեղ ներկայացվում է գրականության վերլուծություն, ցանկալի կլիներ «տեսնել» տարբեր հեղինակների մոտեցումների և հենց հետազոտողի սեփական տեսակետի, դիրքորոշման երկխոսություն: Սա մեծապես կհարստացներ ընդգրկուն գրականության վերլուծությունը:
- Մի շարք հարցեր ունենք փորձարարական հետազոտության հետ կապված: Այսպես, այդքան էլ հստակ չի, թե ի՞նչ չափանիշների հիման վրա է առանձնացվում բուն կամ սուր ճգնաժամը, ի՞նչ են իրենցից ներկայացնում Նախաճգնաժամային և Հետճգնաժամային փուլերը, ինչպե՞ս են դրանք առանձնացվում և դասակարգվում:
- Լրացուցիչ բացատրության կարիք ունի նաև այն, թե ի՞նչ չափանիշների հիման վրա է կառուցվել Ես-կոնցեպցիայի հարցարանը: Վերջինս ինքնին

կառուցվածքային և ֆունկցիոնալ բնույթ է կրում, սակայն մեր կարծիքով, դրա ստեղծման չափանիշների վերհանումը և ներկայացումը սկզբունքային են:

Նշված դիտարկումներն ու առաջարկությունները ոչ մի կերպ չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտական նշանակությունն ու արժեքը, քանի որ աշխատանքի թեման թե՛ տեսական, թե՛ գործնական տեսանկյունից շատ հետաքրքիր և շատ արդիական է, պահպանված են ատենախոսության կառուցվածքի և տրամաբանության սկզբունքները, տեքստի շարադրման գիտական-ակադեմիական ոճը, հետազոտության գիտականությունը, հուսալիությունն ու հավաստիությունը: Հույս ունենք, որ մեր դիտողություններն ու ցանկությունները կօգնեն հեղինակին անձի զարգացման հիմնախնդիրների հետագա մշակումներում:

**Եզրակացություն**

Սիրինա Հովհաննեսի Առաքելյանի՝ «Անձի Ես-կոնցեպցիայի առանձնահատկությունները 25-33 տարեկանի ճգնաժամի ընթացքում» թեմայով ատենախոսական աշխատանքը ավարտուն, ինքնուրույն, բարձր գիտականությամբ, գրագետ իրականացված աշխատանք է: Այն իր բովանդակությամբ համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԹ.00.01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Ֆ.Հարությունյան

Ս. Ֆ. Հարությունյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական խորհրդի

քարտուղար, բ.գ.թ., դոցենտ

Մ. Վ. Հովհաննիսյան

11.02.26թ.